ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 մարտի 2019 թ.

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը, լսելով և քննարկելով ՀՀ ԳԱԱ 2018 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքները, արձանագրում է, որ ՀՀ ԳԱԱ Նախագահությունում, բաժանմունքներում և գիտական կազմակերպություններում իրականացվել է նոր գիտական արդյունքների ստացմանը նպատակաուղղված գործունեություն:

2018 թ. ԳԱԱ համակարգի գիտահետազոտական կազմակերպությունները կատարել են գիտական աշխատանքներ 6 նպատակային, 45 բազային և 148 թեմատիկ ծրագրերով: Ստացված արդյունքներով հրապարակվել են 156 մենագրություն և ժողովածու, 28 ուսումնական ձեռնարկ և դասագիրք, 2140 հոդված (953-ը արտասահմանում), 508 թեզիս (231-ը արտասահմանում):

Կառավարության քննարկմանն է ներկայացվել ԳԱԱ գիտական կազմակերպությունների ինովացիոն առաջարկների նորացված փաթեթը: Այն ուղարկվել է նաև ինովացիոն քաղաքականության զարգացման և գիտական մշակումների առևտրայնացման հարցերով շահագրգռված տարբեր երկրների կազմակերպություններին:

ԳԱԱ աջակցել է համակարգի գիտական կազմակերպությունները նոր սարքերով և սարքավորումներով վերազինելու հարցում: ՀՀ գիտական կազմակերպությունների ընդհանուր օգտագործման համար ձեռք է բերվել և ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում տեղադրվել միջուկային մագնիսական ռեզոնանսի սպեկտրոմետրը:

Առանձնակի ուշադրություն է դարձվել ակադեմիայի և բուհական համակարգի համագործակցության արդյունավետության բարձրացման հարցին, կազմակերպվել են արտագնա համատեղ նիստեր, քննարկվել են գործող համատեղ անբիոնների աշխատանքի արդյունավետության բարձրացման, ակադեմիայի գիտական կազմակերպությունների և բուհերի համապատասխան ֆակուլտետների միջև

համագործակցության ծրագրերի հեռանկարները: Ներկայումս ակադեմիայի մոտավորապես 500 գիտնականներ համատեղության կարգով դասախոսում են բուհերում:

Նախագահությունը բազմիցս անդրադարձել է միջազգային գիտական կապերի ամրապնդման հարցին, հատկապես՝ Եվրոպական միության «Հորիզոն-2020» ծրագրի աշխատանքներին ակտիվ մասնակցությանը:

Քննարկվել է գիտության ոլորտում միջազգային համահայկական գիտական ցանցերի ստեղծման և զարգացման հարցը՝ ընտրելով արտասահմանում աշխատող առավել հայտնի հայ գիտնականներին ակադեմիայի արտասահմանյան անդամների կազմում:

Հետևողական քաղաքականության արդյունքում զգալի կերպով աճել է համակարգի գիտնականների մասնակցությունը հանրապետության ռազմաարդյունաբերությանը վերաբերող գիտական հետազոտություններին:

Նախագահության որոշմամբ ուսումնասիրվել է ՀՀ ԳԱԱ համակարգի կազ-մակերպությունների գործունեության արդյունավետությունը, իսկ գնահատման արդյունքների հանգամանալից վերլուծությունը հրապարակվել է առանձին գրքույկով:

Քննարկվել են ինստիտուտների 2019թ. բազային, թեմատիկ, նպատակային ծրագրերով, միջազգային դրամաշնորհներով և պայմանագրերով ֆինանսավորման հարցերը: Մշտապես ուշադրության կենտրոնում է գտնվել երիտասարդ գիտնականների գիտական զեկուցումների քննարկումը, նրանց գործուղումների կազմակերպումը և մասնակցության ապահովումը միջազգային գիտաժողովների աշխատանքներին:

Ընդգծված ուշադրություն է դարձվել ինստիտուտների միջև հնարավոր միջգիտակարգային հետազոտություններ իրականացնելու հարցին:

Քննարկվել և որոշումներ են ընդունվել ինստիտուտների ներքին կառուցվածքի օպտիմալացման, գործող որոշ գիտական լաբորատորիաների և խմբերի լուծարման, միավորման, խոշորացման և նորերի ստեղծման վերաբերյալ:

Մանրամասն անդրադարձվել է կազմակերպված գիտաժողովներին, քննարկվել և վերլուծվել են արդյունքները:

Բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների մասնակցությամբ գիտական կազմակերպություններում անց են կացվել տարեկան հաշվետու ժողովներ: Քննարկվել և հաստատվել են 2018 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին հաշվետվությունները:

Ակադեմիան անդրադարձել է ՀՀ կառավարությունից և վերադաս մարմիններից ստացված բոլոր փաստաթղթերին, ներկայացրել է իր առաջարկություններն ու դիտողությունները: Հատուկ ուշադրությամբ և մանրամասն են քննարկվել բարձրագույն կրթությանը, գիտությանը, երկրի պաշտպանությանը, առաջավոր տեխնոլոգիաներին, գիտության ֆինանսավորմանն առնչվող օրենսդրական և իրավական ակտերի նախագծերն ու ներկայացվել են արմատական դիտողություններ և առաջարկություններ:

Ընդհանուր ժողովը կարևորում է կառավարման մարմինների հետ Ակադեմիայի ղեկավարության պարբերական հանդիպումների անհրաժեշտությունը՝ երկարաժամկետ լուծումներ պահանջող գիտական խնդիրների վերաբերյալ և հանձնարարում է ՀՀ ԳԱԱ նախագահությանը ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին.

1. կարևորել ՀՀ-ում հիմնարար գիտության դերը, քանի որ դա ՀՀ ԳԱԱ-ի կարևորագույն առաքելությունն է և կիրառական հետազոտությունների զարգացման հիմքը.

2. հանձնարարել ինստիտուտներին առավել ակտիվորեն մասնակցել միջազգային տարբեր ծրագրերի համար հայտարարված մրցույթներին.

3. հատուկ ուշադրություն դարձնել երիտասարդ կադրերի պատրաստմանը և նրանցով ինստիտուտների համալրմանը.

4. Պաշտպանության նախարարության հետ քննարկել համատեղ հետազոտական և տեխնոլոգիական կենտրոն ստեղծելու հարցը.

5. խրախուսել գիտական կազմակերպությունների կողմից ՀՀ տնտեսության զարգացմանը, պետության պաշտպանական համակարգի և անվտանգության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակումը՝ ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով.

6. ցուցաբերել հնարավոր աջակցություն ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ-ում Հանրապետության համար կարևոր սուպերհամակարգչային կենտրոնի ստեղծմանը.

7. արտագնա աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այդ աշխատանքների համար նախատեսել որոշակի հավելյալ ֆինանսավորում.

8. ակտիվ օգտագործել սփյուռքի գիտնականների, հատկապես ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների ներուժը.

9. մշակել կարգ՝ կազմակերպությունների տարեկան հաշվետվություններում ընդգրկելու հատուկ փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման արդյունքները՝ փաստաթղթերի փաթեթներ և այլն.

10. մշակութային և մարդկային կապիտալի ձևավորման գործում շատ կարևոր է հասարակական գիտությունների դերը, ինչը պետք է հաշվի առնել «Գիտական կամ գիտատեխնիկական պետական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գնահատման, տարակարգման և բազային ֆինանսավորման հիմնական սկզբունքների և չափանիշների» վերաբերյալ որոշման մեջ: Նախագիծը պետք է հանգամանորեն քննարկվի.

11. խորացնել բուհերի հետ ակադեմիական գիտական կազմակերպությունների ինտեգրումը.

12. շարունակել և ավելի ակտիվացնել աջակցությունը ԼՂՀ ԿԳՄՆ <<Արցախի գիտական կենտրոնին>>:

Ընդհանուր ժողովը որոշում է.

1. Հավանություն տալ ՀՀ ԳԱԱ 2018 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեությանը:
2. Հանձնարարել ՀՀ ԳԱԱ նախագահությանը դիմել ՀՀ կառավարությանը հետևյալ հարցերով՝

- գիտության զարգացումը և նորամուծական գործունեությունը խթանելու նպատակով ձեռնարկել միջոցառումներ գիտաշխատողի աշխատավարձը հասցնելու հանրապետությունում միջին աշխատավարձի մակարդակին.
- գիտաշխատողների գիտական աստիճանի համար տրվող հավելավճարները հարկերից ազատել և այդ գումարը ավելացնել կենսաթոշակներին.

- բարձրացնել ասպիրանտական կրթաթոշակները.
- առաջարկել բարձրագույն որակավորման կոմիտեին՝ ստեղծելու գիտության ժամանակակից ուղղություններին համապատասխանող նոր մասնագիտական խորհուրդներ.
- ԳԱԱ կազմակերպությունների պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի պահպանման, վերանորոգման և անվտանգ շահագործման համար հատկացնել բյուջետային ֆինանսավորում.
- առաջարկել տարանջատել ինստիտուտների բյուջետային և արտաբյուջետային պայմանագրերի ֆինանսական հոսքերի վարումը, հնարավորություն ընձեռելով ինստիտուտներին ինքնուրույն և արդյունավետ կազմակերպելու արտաբյուջետային ֆինանսական հոսքերի կառավարումը, ՀՀ ԳԱԱ կազմում ինստիտուտների՝ արտաբյուջետային պայմանագրերով իրականացվող ապրանքների ձեռքբերումների գործընթացը ազատել գնումների մասին օրենքի պահանջներից.
- վերացնել այն կարգը, որը 70 տարեկանից բարձր տարիք ունեցող գիտնականին արգելվում է լինել թեմայի ղեկավար.
- դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ Սևանա լճի մակարդակը բարձրացնելու, ջրառ չկատարելու, ջրամբարից և ջրատարներից կորուստները կրճատելու վերաբերյալ, ինչպես նաև կրճատել կենսաձին տարրերի հոսքը դեպի լիճ, խստացնել կենսառեսուրսների պաշտպանությունը և անցնել կառավարելի ձկնորսության համակարգին:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ռ.Մ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ.Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ